ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Աղվան Մինասյանի անվան արվեստի և ստեղծագործության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ «**Աղվան Մինասյանի անվան արվեստի և ստեղծագործության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ հաստատություն) տնօրենի** թափուր պաշտոն զբաղեցնելու համար: Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ք. Սիսիան, Չարենցի 5:

Հաստատության տնօրենն իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ,

բ) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը,

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և համայնքի ղեկավարի իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

դ) տալիս հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

ե) աշխատանքի նշանակում ու աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

զ) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

է) կատարում է աշխատանքի բաշխում աշխատակիցների միջև,

ը) սահմանում է հաստատության կառուցվածքն ու նրանց իրավասությունները,

թ) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

ժ) իրականացնում է մանկավարժական կադրերի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար,

ժա) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ,

ժբ) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը,

ժգ) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում լիազորված համայնքային մարմնի հաստատմանը,

ժդ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և հաստատության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

Հաստատության տնօրենի հիմնական աշխատավարձի չափը կազմում է 170000 /մեկ հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի՝

1) բարձրագույն կրթություն.
2) հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան

բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.
3) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
4) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.
5) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
6) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.
7) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.
8) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցույթը կկայանա 2025 թվականի ապրիլի 16-ին, ժամը 10:00-ին, Սիսիանի համայնքապետարանի շենքում /ք. Սիսիան, Սիսական 31/:

Մրցույթին մասնակցելու համար դիմող քաղաքացիները Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում.
2) մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի.
3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.
4) ինքնակենսագրություն.
5) անձնագրի կամ նույնականացման քարտի, բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի, արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակները և պատճենները.
6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.
7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9:00-18:00-ն, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային մյուս օրերից, Սիսիանի համայնքապետարան, ք. Սիսիան, Սիսական 31 հասցեում: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ **2025 թվականի ապրիլի 1-ը մինչև ժամը 17:00-ն**:

Մրցույթի պայմաններին հանգամանալից ծանոթանալու համար դիմող քաղաքացիները կարող են ուսումնասիրել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N02-Ն հրամանը, ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի N539-Ն որոշումը և այլ իրավական ակտերը՝ Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի www.arlis.am պաշտոնական կայքում:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները տեղեկություններ և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմ /ք. Սիսիան, Սիսական 31, հեռ. /0283/ 2-33-30/: